

ՕՐԸՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼԱՅՑԸ

ԱՄԵՆ. ԴՈՒՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻՆ

(Իր ծննդեան եօթանասնամեակին առիթով)

1860, Փետր. 23/6 Մարտ

Օրհնութիւնդ, Հայր, կ'ուզեմ ես ալ շնորհասուր.

Ձեմ լրբած տունդ հոգեկեր՝

Զոր կանգնեցին՝ կիրարկելով շունչդ ու դուր՝

Սուրբ օծութեամբ ծիր ձեռներդ:

Օրհնութիւնդ, Հայր. չեմ ուրացած քու սանար՝

Զոր զիտութեամբ օժեցիր.

Աստուծոյ զաւրին մէջ՝ ձիթենի անհանար՝

Պատուասց առինք կենսամիր:

Օրհնութիւնդ, Հայր. խորանդ մոռցած չեմ քու սուրբ՝

Ուր շնչեցիր կեանք ու շնորհ.

Մեր հէնքին վրայ առէջն հոգւոյդ գերանուրբ

Հիւսեց պաշկերք մեր նոր:

Օրհնութիւնդ, Հայր. հրեղէն սեղանդ խունկի

ձեներեց սիրտս անձկայրեաց.

Ահա անոր առջեւ եկած եմ ծունկի

Ու կը մըխամ բազկաբաց:

Օրհնութիւնդ, Հայր. ականակիս աղբիւրիդ

Պատուէն ունիմ բոցակէզ.

Շրթներս բռնած եմ ծորումիդ նւարիս

Ու մի՛՛ս հաղորդ ըլլամ քեզ:

Օրհնութիւնդ, Հայր. քու ալիքէդ իմաստն

ձանանչ մ'ոսկի իջնէ քող.

Օրերուս հասկը՝ զոր լեցնել կրնաս դուն՝

Շունչիդ առնէ ծուփն ու դող:

Օրհնութիւնդ, Հայր. եօթանասուն աստղերէդ

Յիսունն համբեր եմ փարքամ.

Տա՛յ Աստուած որ երկինքիդ վրայ արփաւէ

Երեսն աստղեր դեռ կարդամ:

Օրհնութիւնդ, Հայր, օրհնութիւնն Հօր շնորհաց բիր՝

Որով կերտուեր են յարմար

Տուն ու սանար, խորան, սեղան եւ աղբիւր,

Ալիք, աստղեր անհամար:

Սուրբ օրհնութիւնդ, Հայր, զի Քեզմով զիցցայ ես

Այդ շնորհաց Հայրն օրհնել մի՛ս.

Ակնաղբիւրն ինքն է օրհնութեանցն այն պէսպէս՝

Զոր չը՛մպեր շուրքն ամբարիս: